

Գործարար վարքագծի կանոններ

WÖRWAG Pharma Group

Ներածություն

WÖRWAG Pharma Group-ը միջազգային ընկերություն է, որն ունի ընտանեկան բիզնեսի արժեքներ: Իր արտադրանքի լայն ընտրությամբ հանդերձ WÖRWAG Pharma-ն կենտրոնացած է երկարաժամկետ և կայուն բիզնեսի վրա: Մեր ուժեղ կողմերից մեկն այն է, որ մեր աճին զուգահեռ մենք դեռ շարունակում ենք լինել ընտանեկան բիզնես, որն ընդունում է իր պատասխանատվությունը:

Մարդիկ կենտրոնական տեղ են գրավում մեր ողջ գործունեության մեջ: Այս պնդումը մի քանի բառով եղել է WÖRWAG Pharma-ի գործունեության սկզբնակետը և հիմնաքարը: Մենք հատուկ կարևորություն ենք տալիս այն արժեքներին, որոնք դուք չեք գտնի հաշվապահական թերթիկներում:

Պատասխանատվության ընդունումը, նվիրվածությունը աշխատանքին և մեր ընկերության հետ նույնականացումը, ինչպես նաև մարդասիրությունը և մտերմությունը այն գծերն են, որոնք դարձնում են մեզ այնպիսին, ինչպիսին որ կանք: Մեր աշխատակիցները պետք է ունակ լինեն գործել անկախ, ինքնուրույն կայացնել որոշումներ և ազդել իրենց սեփական նախաձեռնությունների վրա:

Այդ արժեքներին հավատարիմ մնալու և պրակտիկայում դրանց համաձայն ապրելու շնորհիվ՝ մեր ընկերությունը հնարավորություն է ունեցել ծավալել իր գործունեությունը ամբողջ աշխարհով մեկ: Մենք հպարտ ենք մեր ընկերության պատմությամբ: Մենք աճել ենք Շտուտգարտ-Ցուֆենհաուսենում գտնվող քաղաքային դեղատնից՝ վերածվելով կենսաբաղադրիչների (բիոֆակտորներ) համաաշխարհային մասնագետի: Մեր նպատակն է զարգացնել ապացուցված արդյունավետությամբ և գերազանց որակի արտադրանք, որն օգտակար է մարդկանց առողջության և կյանքի որակի համար:

Մենք նաև պետք է պաշտպանենք մեր ընկերությունը, եթե ցանկանում ենք վստահ լինել, որ մեր ընթացիկ գործունեությունը հաջողության կհասնի ապագայում: Պատասխանատու, էթիկապես ընդունելի և օրինական գործարար վարքը կենսական է WÖRWAG Pharma-ի հաջողության համար: Բարի համբավը, որը մենք ջանասիրաբար ստեղծել ենք և ձեռք բերել մեր հաճախորդների, բաժնետերերի և բիզնես գործընկերների, մեր աշխատակիցների և հանրության շրջանում, կարող է խիստ տուժել գեթ մեկ օրինախախտման հետևանքով:

Ահա թե ինչու կազմակերպության ղեկավարությունը որդեգրել է այս Գործարար վարքագծի կանոնների քաղաքականությունը: Այն պարտադիր է WÖRWAG Pharma-ի բոլոր աշխատակիցների համար: Գործարար վարքագծի կանոնադրությունը միտված է օգնել ճանաչել ռիսկերը և, հետևաբար, խուսափել օրենքի խախտումներից:

Կանոնադրությունը նաև բաշխում է հանձնարարությունները և պատասխանատվությունները, և այսպիսով պարզաբանում, թե ով ինչի համար է պատասխանատու:

Compliance@WÖRWAG Pharma

«Compliance» նշանակում է համապատասխանություն — համաձայնեցում արտաքին և ներքին կանոնների: Այդ կանոնները կարող են հաստատվել արտաքինից՝ օրենքներով կամ կանոններով, կամ սահմանվել ներքուստ՝ օրինակ, ծրագրերի, գործընթացների և հսկողության տեսքով: Պատասխանատու, էթիկապես ճշգրիտ և օրինական գործունեությունը նույնքան հասարակ հասկացություն է WÖRWAG Pharma-ի հաջողության համար, որքան մեր հաճախորդների կողմնորոշումը և մեր արտադրանքի որակը:

Համապատասխանությունը ընկերության ընթացիկ հաջողությունն ապահովելու բանալին է: Օրինական վարքագիծը պաշտպանում է աշխատակիցներին, մենեջերներին և նրանց հետևում գտնվող ընկերությունը ռիսկերից: Համապատասխանության ռիսկերի և օրենքների մասին իրազեկվածությունը նույնպես կարևոր է ճշգրիտ որոշում կայացնելու համար ցանկացած դեպքում, երբ կարող է լինել անհատակություն:

Համապատասխանության ռիսկերը և ցանկացած ոչ օրինական վարք որքան հնարավոր է վաղ հայտնաբերելու համար, WÖRWAG Pharma-ն թույլ է տալիս իր աշխատակիցներին և բիզնես գործընկերներին գաղտնի զեկուցել համապատասխանության խախտումների

մասին հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ compliance@woerwagpharma.com

Անանուն զեկուցումը նույնպես հնարավոր է և այն կհսկվի նույնքան խիստ, որքան անձամբ հաղորդված զեկույցները:

WÖRWAG Pharma-ն ստեղծել է խմբային համապատասխանության պատասխանատուի հաստիք, որպեսզի ամրապնդի համապատասխանության կանոնները խմբի ներսում: WÖRWAG Pharma-ն խրախուսում է իր աշխատակիցներին զեկուցել Գործարար վարքագծի կանոնների խախտման մասին WÖRWAG Pharma-ի ղեկավար թիմին, խմբային համապատասխանության պատասխանատուին կամ ազգային կազմակերպությունների համապատասխանության մասնագետներին:

WÖRWAG Pharma-ի բոլոր աշխատակիցները պետք է համապատասխանեն իրենց աշխատավայրում սահմանված օրենքներին: Մենեջերները նույնպես պետք է իրականացնեն բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի խուսափեն օրենքների խախտումից իրենց պատասխանատվության տակ գտնվող ոլորտում: Մենեջերները պատասխանատու են բոլոր օրինախախտումների համար, որոնցից հնարավոր էր խուսափել, եթե իրականացվեր լիարժեք վերահսկում: Բոլոր աշխատակիցները պետք է իրականացնեն իրենց աշխատանքը այնպես, որ դա չվնասի WÖRWAG Pharma-ի համբավին հաճախորդների, գործընկերների և հանրության շրջանում:

Սույն Գործարար վարքագծի կանոնները հստակեցնում են այն շրջանակը, որի սահմաններում մենք աշխատում ենք: Կանոնները սահմանում են WÖRWAG Pharma Group-ի գործարար վարքագծի հիմքում ընկած սկզբունքները և գործընկերների ու հանրության հետ հարաբերությունները: Այն սահմանում է մեր բիզնես գործունեությունը առաջնորդող սկզբունքները և արտահայտում մեր ընկերության արժեքները:

Գործարար վարքագծի այս ընդհանուր օրենքները մեր բոլոր աշխատակիցների վարքագծի չափանիշն են և գործելու սահմանները: Մենք ակնկալում ենք, որ ցանկացած աշխատակից կարող է գաղտնի խորհուրդ հարցնել և օգնության դիմել, երբ նա հանդիպում է այնպիսի որոշումների, որոնք ներառում են էթիկական կամ օրինական խնդիրներ, կամ եթե նրանք տեղեկացվել են իրենց ոլորտում այնպիսի գործարար վարքագծի մասին, որը նրանք համարում են բարդ կամ կասկածելի: WÖRWAG Pharma-ի ղեկավար թիմը, խմբային համապատասխանության պատասխանատուն և ազգային կազմակերպությունների համապատասխանության մասնագետները հասանելի են կապ հաստատելու համար:

Արտադրանքի անվտանգության և արտադրանքի որակի երաշխիք

Արտադրանքի անվտանգությունը և որակը ամենամեծ կարևորությունն ունեն: Մեր արտադրանքը ստեղծվում է մեծ խնամքով և ենթակա է որակի խիստ վերահսկման: Մենք հետևում ենք մեր արտադրանքին շուկայում: Մենք հաշվի ենք առնում ցանկացած տեղեկատվություն անբավարար անվտանգության և/կամ որակի մասին, և ուշադիր հետազոտում այն: Անհրաժեշտության դեպքում մենք տեղեկացնում ենք պատասխանատու ղեկավարությանը և ձեռնարկում ցանկացած քայլ, որն անհրաժեշտ է մեր հաճախորդների պաշտպանության համար:

Արդար մրցակցություն

WÖRWAG Pharma-ն հավատարիմ է արդար մրցակցությանը: Չպետք է ձեռնարկվի որևէ քայլ, որը կարող է լինել անարդար և նպատակ ունենալ հայտարարել գին կամ փոխհամաձայնության գալ գների շուրջ: Մա ներառում է կողմերի միջև տարաձքների կամ հաճախորդների բաժանումը, կամ մրցակիցների հետ տեղեկություններ փոխանցել մատակարարողի հետ հարաբերությունների, պայմանների և դրույթների, հնարավորությունների, շուկայական մարտավարությունների կամ աճուրդային մարտավարության մասին:

Միջազգային շուկաներ

WÖRWAG Pharma-ն վաճառում է իր արտադրանքը աշխարհի տարբեր երկրներում: Քանի որ մեր արտադրանքը ստեղծվում է տարբեր երկրներում, նպատակակետին հասնելու համար այն ճանապարհին պետք է տարբեր սահմաններ հատի: Արտահանման և ներմուծման օրենքները և մաքսային կարգավորումները պետք է միշտ խիստ համաձայնեցված լինեն:

Գործարար վարքագիծը աշխատավայրում / Աշխատավայրի անվտանգություն

Հասարակության ընկալումը WÖRWAG Pharma-ի մասին որոշվում է յուրաքանչյուր աշխատակցի վարքագծով: Այդ պատճառով մենք ակնկալում ենք վայել և հարգալից վերաբերմունք գործընկերների, մատակարարողի աշխատակիցների և հաճախորդների նկատմամբ, ինչպես նաև այլ բիզնես գործընկերների հանդեպ:

Հավասար իրավունքներ

Մեր նպատակն է միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը: Մենք չենք ընդունում խտրականության կամ բռնության որևէ դրսևորում: Մենք պատվով ենք վերաբերվում աշխատանքին և համագործակցող վարքագծին՝ առանց տարիքային, ծագումնաբանական, սեռական կամ ռասայական տարբերություններ դնելու: Մենք օբյեկտիվորեն գնահատում ենք աշխատանքի արդյունքը՝ չկապելով այն քաղաքական, կրոնական դիրքորոշումների, մարմնի ֆիզիկական կառուցվածքի, կամ անձի սեռական պատկանելիության հետ: Մեր աշխատանքը ղեկավարների, գործընկերների և աշխատակիցների հետ բնորոշվում է ազնվությամբ, հարգանքով, թիմային ոգով և բաց լինելով: Այս սկզբունքները նույնպես վերաբերում են մեր ընկերությունից դուրս գտնվող գործընկերների նկատմամբ գործարար վարքագծին:

Արգելվում է թմրանյութերի և ալկոհոլի օգտագործումը աշխատավայրում

Մենք միշտ մասնագիտորեն և պատշաճ ենք իրականացնում մեր աշխատանքը: Մեր աշխատանքը պահանջում է պարզ մտածողություն և հաճախ ստիպում արագ կողմնորոշվել. սա կարևոր գործոն է մեր աշխատակիցների և հաճախորդների անվտանգության համար: Ալկոհոլի և թմրանյութերի պատճառով խանգարվում է աշխատակցի աշխատելու ունակությունը: Այս պատճառով ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումը աշխատավայրում խստիվ արգելվում է:

Առողջություն և անվտանգություն

WÖRWAG Pharma Group-ը կողմ է անվտանգության և առողջական խնդիրների մասին իրազեկմանը, որպեսզի պաշտպանի իր աշխատակիցների կյանքը և առողջությունը: Այդ պատճառով աշխատավայրում ծխելն արգելված է:

WÖRWAG Pharma Group-ի բոլոր կազմակերպությունները ձեռնամուխ են իրենց աշխատակիցների համար անվտանգ և արդյունավետ աշխատանքային միջավայրի ստեղծմանը, և պետք է համապատասխանեն առողջության և անվտանգության օրենքներին:

Ընկերության ակտիվների պաշտպանություն

WÖRWAG Pharma Group-ի նյութական և մտավոր սեփականությունը պետք է լինի պաշտպանված կորստից, կողոպուտից և սխալ օգտագործումից: Մեր ընկերության արժեքները ծագում են կազմակերպության հաջողությանը նվիրված մարդկանց գաղափարներից և ստեղծարար մղումներից՝ թե ներկայում, թե անցյալում: Գիտելիքի կառավարումը կայունությամբ պահպանել է այդ արժեքը տարիներ շարունակ:

Հայտնագործությունները, արտոնագրերը, անունները, բրենդները և այլ նոու-հաուն յուրահատուկ արժեք ունեն: Այս ոչ նյութական ակտիվները կազմակերպության ապագայի համար անչափ կարևոր են ֆինանսական տեսանկյունից, և մենք համապատասխան պաշտպանություն ենք սահմանում նրանց համար: Մեր խնդիրն է հարգել երրորդ անձանց նյութական և ոչ նյութական սեփականությունը և չընդունել ապօրինի եղանակներով ստացված տեղեկատվությունը:

Ընկերության սեփականությունը և օբյեկտները

Մենք հարգում ենք մեր ընկերության սեփականությունը և օբյեկտները, և խնամքով ենք վերաբերվում դրանց: Ակտիվները և փողերը չպետք է օգտագործվեն ապօրինի նպատակներով: Մենք օգտագործում ենք ընկերության կողմից տրամադրված սարքավորումները, օր. հեռախոսներ, ընկերության մեքենաներ, համակարգիչներ՝ համաձայն WÖRWAG Pharma Group-ի տարածաշրջանային ուղեցույցների: Ընկերության աշխատակիցների օգտագործման համար հասանելի դարձրած սարքավորումները և նրանցում զետեղված տվյալները համարվում են ընկերության սեփականությունը: Համակարգիչների ոչ պատշաճ օգտագործումը անթույլատրելի է: Աշխատանքային էլեկտրոնային հասցեները չպետք է կիրառվեն անձնական նպատակներով:

Գաղտնիության համաձայնագիր

Մենք մեծ դեր ենք տալիս անձնական տվյալների պաշտպանությանը: Բիզնեսի գաղտնիքները և դրանց առնչվող գիտելիքը չպետք է փոխանցվի երրորդ անձանց, կամ ինչն ավելի վատ է, հանրայնացվի առանց օրինական հիմքերի: Սույն պնդումը վերաբերվում է փաստաթղթերին, փաստերին, տվյալներին և շահութաբեր օբյեկտներին վերաբերվող գիտելիքին, նոր ապրանքատեսակներին, հետազոտման և զարգացման գաղափարներին, բիզնեսի և մարքեթինգի մարտավարություններին, հաճախորդների ներքին տեղեկատվությանը, անձնական տեղեկատվությանը, ներդրումներին և բաժնետոմսերին, արտադրման գործընթացին, ներքին ուղեցույցներին և գործելակարգերին, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվությանը, որը հասանելի չէ հանրությանը, սակայն մեծ նշանակություն ունի WÖRWAG Pharma Group-ի կամ իր մրցակիցների համար: Ոչ մի աշխատակից չպետք է օգտագործի WÖRWAG Pharma Group-ի մտավոր սեփականությունը և բիզնեսին վերաբերվող տեղեկատվությունը իր անձնական շահերի համար: Մենք

ակնկալում ենք բոլոր աշխատակիցներից տվյալների և տեղեկատվության գաղտնիություն և պաշտպանություն երրորդ անձանց ոչ լիազորված մուտքից:

Կազմակերպության մասին գաղտնի տեղեկատվությունը շատ զգայուն է և չպետք է բարձրաձայնվի նույնիսկ գործող պայմանագրի դադարեցումից հետո: Միայն այն դեպքերում, երբ նման գաղտնիությունը կարող է նշանակալի անբարենպաստ ազդեցություն թողնել նախկին աշխատակցի վրա, նա կարող է դիմել այդ պարտավորությունից ազատվելու հայտով: Այդ աշխատակիցը պետք է տեղեկացնի WÖRWAG Pharma-ին և հիմնավորի նման պահանջը:

Զեկուցում

Հանրությանը հասանելի ողջ տեղեկատվությունը պետք է լինի օրինական և համապատասխանի միջազգային ստանդարտներին: Տեղեկատվությունը սկզբունքայնորեն պետք է ներկայացվի հանրությանը միայն լիազորված աշխատակիցների միջոցով: Ցանկացած անձ, ով առանց համապատասխան լիազորության հանրությանը կներկայանա WÖRWAG Pharma-ի անունից, իրականացնում է դա որպես առանձին անհատ: Ընկերության համապատասխանության ղեկավար կազմը պետք է անմիջապես ներգրավվի հետաքննիչ ղեկավար մարմինների կողմից դիմումի հայցման դեպքում (օր. ոստիկանություն, մաքսային տեսուչ, դատախազներ):

Տվյալների պաշտպանություն

Ըստ օրենքի ընկերության կողմից աշխատակիցների մասին պահվող անձնական տվյալները պետք է պաշտպանված լինեն երրորդ կողմերի ոչ լիազորված մուտքից: WÖRWAG Pharma-ի այն աշխատակիցները, որոնք իրենց աշխատանքի բնույթի հետ կապված անձնական տվյալների մուտք ունեն, պետք է իրենց աշխատանքը իրականացնելիս վստահ լինեն, որ այդ տվյալները պաշտպանված են:

Համագործակցություն հաճախորդների, մատակարարների և բիզնես գործընկերների հետ

Մեր հաճախորդների, մատակարարների և բիզնես գործընկերների հետ հարաբերությունները բիզնեսում ձևավորված են էթիկական նորմերի համաձայն: Մենք իրականացնում ենք մեր ընկերության գործունեությունը՝ լինելով բաց, անկեղծ և կրելով էթիկական պատասխանատվություն: Մեր գործողությունների մղող ուժն է ազնվությունը, մեծ հավատը և բարեխղճությունը: Մենք ասում ենք այն, ինչ ի նկատի ունենք, և անում ենք

այն, ինչ որ ասում ենք: Նույնը մենք ակնկալում ենք մեր աշխատակիցներից և բոլոր նրանցից, ում հետ համագործակցում ենք բիզնեսի շրջանակներում:

Շահերի բախումից խուսափում

Մենք չենք պահպանում անձնական հարաբերությունները այն հաճախորդների, մատակարարների կամ մրցակիցների հետ որոնք կարող են ազդել WÖRWAG Pharma-ի անունից կայացվող որոշումների վրա :

Մեր աշխատակիցները խուսափում են իրենց անձնական շահերի և ընկերության շահերի միջև բախումներից: Մենք թույլ չենք տալիս, որ անձնական շահերն ու անձնական հարաբերությունները ազդեն մեր որոշումների վրա: Այն հարաբերությունները, որոնք միայն անձնական նյութական կամ ոչ նյութական առավելությունների բնույթ են կրում, չպետք է ազդեն պայմանագրերի որոշումների վրա, կամ բիզնեսային հարաբերությունների շարունակականության կամ դադարեցման վրա: Սա պետք է վերաբերվի ցանկացած հնարավոր շահերի բախման դեպքին:

Այս կոնտեքստում աշխատակիցները կարող են այլ լրացուցիչ աշխատանքի անցնել միայն նախապես համաձայնություն ստանալով WÖRWAG Pharma-ի կողմից: Մասնավորապես, սա վերաբերվում է մատակարարների, հաճախորդների և WÖRWAG Pharma-ի մրցակից ընկերությունների հետ լրացուցիչ աշխատանքին: Սա նաև վերաբերում է սեփական կապիտալի ավելի քան 10% չափով բաժնետիրությանը:

Ընկերության ղեկավար անձնակազմից նախապես ստացված համաձայնությունը անհրաժեշտ է ցանկացած տրանսակցիաների համար այն ընկերությունների հետ, որտեղ WÖRWAG Pharma-ի աշխատակիցը, նրա ամուսինը, զուգընկերը կամ մոտ հարազատը բաժնետեր է կամ իրականացնում է ղեկավարող գործունեություն: Վերոնշյալ պնդումը վերաբերվում է նաև WÖRWAG Pharma-ի մրցակիցների հետ աշխատակցի գաղտնի պայմանագրերի կնքմանը:

Բոլոր աշխատակիցները պետք է հայտնեն իրենց ղեկավարների թիմին առկա շահերի բախումների մասին, որոնք կարող են ազդել իրենց գործունեության վրա:

Կոռուպցիա և կաշառակերություն

Անձնական շահերի բոլոր տեսակները կամ անհատների նկատմամբ ընտրողական վերաբերմունքը անթույլատրելի է, օրինակ, առավելություն տալ հասույթ ստանալու, համաձայնության կամ պայմանագրի գործարկման նպատակով: Նման դեպքերում շահույթը վերաբերում է ցանկացած անձնական շահի, որի իրավունքը ստացողը չունի: Սա կարող է լինել, օրինակ, նվերների կամ հրավերների տեսքով: WÖRWAG Pharma-ի աշխատակիցները չեն ազդի պոտենցիալ հաճախորդի մտադրությունների վրա՝ լավություն անելով ելնելով պայմանագրի պարզաստումից: Աշխատակիցները նաև չեն ընդունի որևէ նվեր կամ այլ արտոնություններ, որոնք կարող են ազդել իրենց սեփական բիզնեսային որոշումների վրա: Այս դեպքում կապ չունի, թե նման արտոնությունը իրապես ազդել է թե նպատակ ուներ ազդելու որոշման վրա: Պետք է խուսափել նույնիսկ նման ազդեցության տպավորություն թողնելուց:

Նվերները և հրավերները պետք է ընդունել և շնորհել միայն այն պարագայում, եթե դա կծառայի որպես քաղաքավարության դրսևորում ընդհանուր բիզնես գործունեության շրջանակներում: Ազգային օրենքները և կարգերը պետք է հարգել և համապատասխանել դրանց:

Երբևիցե պետք չէ գումար առաջարկել, տալ, պահանջել կամ ընդունել որպես նվեր: Ոչ նվերներ, ոչ ցանկացած այլ տեսակի պարգև չի կարելի առաջարկել հանրային ծառայությունների աշխատակիցներին:

Մեր բիզնես գործընկերների հետ տրանսակցիաների մասին որոշումները հիմնված են միայն չեզոք, գնահատելի փաստերի վրա, ինչպիսին են որակը, արժեքը և արտադրողականությունը: Նվերները, նվիրատվությունները, կաշառքը կամ կոռուպցիան չեն ազդի այդ որոշումների վրա: Ազնվության և արդարության սկզբունքները պետք է պահպանվեն մեր բիզնեսի բոլոր գործերում:

Փողերի լվացում

Փողերի լվացմանը հակազդելու համար ակտիվները պետք է ստացվեն միայն օրինական ճանապարհներով: Հաշվի առնելով դա կանխիկ վճարումներ չպետք է իրականացվեն: Մեծ ծավալի կանխիկ վճարումները, օրինակ €10,000 գերազանցող վճարումներ, պետք է ընդունվեն միայն ընկերության համաձայնությունից հետո: Անանուն բիզնես տրանսակցիաները արգելված են: Կասկածելի բիզնես գործընկերների և/կամ տրանսակցիաների մասին պետք է հայտնել գործարար վարքագծի պատասխանատուին

կամ ընկերության ղեկավարությանը:

Հանրային պատասխանատվություն

Շրջակա միջավայրի համար անվտանգ բիզնես գործունեություն

Մենք հակված ենք ծավալել մեր բիզնես գործունեությունը առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու: Մենք հետևում ենք շրջակա միջավայրի պահպանմանը վերաբերվող օրենքներին և կարգերին: Մենք միտված ենք բարելավել էկոլոգիական ցուցանիշները՝ աջակցելով նոու-հաուի, լավագույն փորձառության և տեխնոլոգիաների ներդրմանը: Մենք անում ենք ամեն հնարավոր բան, որպեսզի նվազեցնենք մեր բիզնեսի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա այնքան, որքան դա հնարավոր է: Մենք հասնում ենք այդ նպատակին տնտեսելով էներգիայի և ջրի օգտագործումը, խնամքով օգտագործելով ամենօրյա աշխատանքի համար անհրաժեշտ պարագաները, խուսափելով օդի աղտոտումից և սահմանափակելով փաթեթավորման օգտագործումը և աղբի կուտակումը:

Աջակցություն տնտեսական աճին և հասարակական զարգացմանը

Մեր հասարակական պատասխանատվությունը կենտրոնացած է մեր մատակարարման շղթայի այլ կողմերի վրա, ինչպես նաև մեր բիզնեսին վերաբերվող այլ հարցերում: Այլ կողմերի հետ (մատակարարներ, հաճախորդներ, սպառողներ, աշխատակիցներ և ավելի լայն հանրություն) փոխազդելիս մենք փորձում ենք վստահ լինել, որ WÖRWAG Pharma Group-ի հասարակական գործունեությունը դրական արդյունավետ ազդեցություն է թողնում (հաշվի առնելով տարածաշրջանային իրավիճակը) և փոխշահավետ է թե ընկերության, թե ավելի լայն հանրության համար: Մենք ակնկալում ենք, որ մեր մատակարարների աշխատանքը կնպաստի իրենց արտադրանքի և արտադրության մեջ համակարգային բարեփոխումների՝ հասարակական, էկոլոգիական և էթիկական որակներում, և մենք օգնում ենք նրանց հասնել այդ նպատակներին:

Նշված կանոնների ներդրում և համապատասխանություն

Վերոնշյալ կանոնների խախտումը կարող է մեր ընկերությանը ֆինանսական վնաս հասցնել, ազդել մեր հեղինակության վրա, կամ հանգեցնել երկու դեպքին էլ: Անհատ աշխատակիցները կարող են պատասխանատվություն կրել հասցրած վնասի համար կամ նույնիսկ ենթարկվել քրեական պատասխանատվության: Հաշվի առնելով վերոնշյալը, չափազանց կարևոր է նշված պայմանների հետևողական իրականացումը: Մենք ջերմորեն և

աշխատակիցները, որոնք խախտում են օրենքը, ներքին կանոնակարգը կամ սույն գործարար վարքագծի կանոնները, պետք է իրազեկված լինեն, որ կենթարկվեն կարգապահական կամ հատուկ դեպքերում քրեական պատասխանատվության:

Լրացուցիչ հարցերի առկայության դեպքում, կամ եթե ինչ-որ բան մնացել է անորոշ, խնդրում ենք կապ հաստատել ձեր ղեկավարի կամ համապատասխանության պատասխանատուի հետ:

Խոսք մեզ հետ: Մա մեր ընկերության պաշտպանության հարցն է:

Wörwag Pharma Group Ղեկավար խորհուրդ